

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Bowers Wilkins LTD-ն ՈԻԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/53 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	Ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	դիգել գեներատոր	դիգել գեներատոր	դիգել գեներատոր	Արդյունաբերական դիգելային գեներատորը Նախատեսված է բարձր հզորության Էլեկտրամատակարարման ապահովման համար, ինչը հնարավորություն է տալիս այն կիրառել տարբեր արդյունաբերական և կոմերցիոն ոլորտներում: Այն ապահովում է կայուն և անխափան աշխատանք՝ օպտիմալ կատարողականությամբ և արդյունավետությամբ: Սարքավորման աշխատանքային հզորությունը կազմում է առնվազն 1000 kVA (800 կՎտ): Գեներատորի վառելիքի մատակարարման համակարգը ինժեկտորային է, մեխանիկական կառավարմամբ: Լիակատար (100%) բեռնվածության դեպքում վառելիքի ծախսը կազմում է առավելագույնը 250 լիտր/ժամ : Գեներատորը հագեցած է առնվազն 140 լիտր յուղի և 230 լիտր հովացման ջրի տարողունակությամբ, ինչը

թույլ է տալիս սարքին աշխատել երկար ժամանակ առանց լրացուցիչ միջամտության: Վառելիքի բաքի տարողությունը պետք է լինի առնվազն 1000 լիտր: Վառելիքի բակը կարող է լինել ինչպես արտաքին այնպես էլ ներքին տեղակայմամբ: Մարտկոցների համակարգը ներառում է առնվազն 400 Ա հոսանք և ապահովում է 24Վ մուտքային լարում: Գեներատորից ելքային լարումը կազմում է 230/400Վ` 50 Հց հաճախականությամբ: Լարման ավտոմատ կարգավորումը գործում է $0.5 \pm \%$ ճշգրտությամբ` ապահովելով անվտանգ և կայուն էլեկտրամատակարարում: Գեներատորի պաշտպանվածության աստիճանը առնվազն IP23/H է (IP23/H նշանակում է, որ գեներատորը պաշտպանված է մեծ օտար առարկաների և թեք անկյան տակ ընկնող ջրի կաթիլների ներթափանցումից, իսկ նրա էլեկտրամոնտաժային բաղադրիչները դիմակայուն են մինչև 180°C ջերմաստիճանին), ինչը թույլ է տալիս սարքին աշխատել տարբեր կլիմայական պայմաններում: Այն ապահովված է Self-alert անվտանգության համակարգով, որն ապահովում է վթարային իրավիճակների արագ արձագանք: ՕԳԳ-ն (օգտակար գործողության գործակիցը) առնվազն 92% է` ինչը բարձր արդյունավետության ցուցանիշ է: Սարքը ներկառուցված է AVR համակարգով (PAM), որը թույլ է տալիս գծերի ավտոմատ կարգավորում: Տեխնիկական չափերն են` • Քաշը առավելագույնը 15000 կգ • Ակտիվ հզորությունը` առնվազն 1320 kVA • Աշխատանքային ակտիվ հզորությունը` առնվազն 1250 kVA • Հզորության

				<p>գործակիցը՝ առնվազն 0.8 Cosφ գեներատորը պետք է լինի նոր, գործարանային փաթեթավորմամբ, և տրամադրվի 1 տարվա երաշխիքով կամ 600 մոտոժամ անսահմանափակ երաշխիքային և ետերաշխիքային սպասարկումով: Տեղադրումը, մոնտաժը և ապամոնտաժումը պետք է իրականացվի Մատակարարի կողմից: Մոնտաժման համար անհրաժեշտ մալուխների և այլ միջոցների գնահատումը պետք է իրականացվի մատակարարի կողմից և ներառվի աշխատանքների մեջ: Մատակարարման ժամկետը՝ 25-30 աշխատանքային օր: Գեներատորի տեղադրումը համարվում է ավարտված այն ընդհանուր ցանցին միացնելուց և թեստավորելուց հետո: Թեստավորելուց հետո մատակարարը տրամադրում է պաշտոնական գրություն գեներատորի աշխատանքային պատրաստ վիճակում լինելու մասին, որից հետո գեներատորը մտնում է երաշխիքի փուլ:</p>
--	--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Bowers Wilkins LTD в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ПЦЧ-ЕЦДЦПР-25/53 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
1				